№ 115 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 23 1900 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 23 № 115

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկրի խոշոր կարիքներից մէկը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Երկրաչարժից վնասվածների օգտին. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Շվեյցարիայից. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ ցուցահանդէսից։

ԵՐԿՐԻ ԽՈՇՈՐ ԿԱՐԻՔՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Եկող 1901 թուականի ապրիլ ամսին Թիֆլիսում տեղի կունենայ մեր երկրի համար կարեւոր մի ժողով, այն է կովկասեան բժիշկների երկրորդ ժողովը։ Վաղուց է, որ զգացվում է մի այդ տեսակ ժողովի կարեւորութիւնը։ Ասպարէզ են եկել բազմաթիւ առողջապահական եւ բժշկական հարցեր, որոնց վերաբերութեամբ անհրաժեշտ են մտքերի փոխանակութիւն եւ մանրամասն խորհրդակցութիւն։

Բժիշկների կովկասեան ժողովը, բացի ընդհանուր բժշկական հարցերից, պէտք է քննի այնպիսի հարցեր, որոնք առանձնապէս նշանակութիւն ունեն Կովկասի, կամ առաւելապէս հարաւային երկրների համար։ Կովկասը բովանդակում է իր մէջ թէ հակառողջապահական խիստ ճնշող եւ թէ բացառիկ նպաստաւոր բուժիչ պայմաններ։ Կովկասը ունի, օրինակ, տենդի այնպիսի ծանր արտայայտութիւններ, ինչպէս է ճահճային տափարակների մալեարիան, բայց եւ այնպիսի հրաշալի ու կազդուրիչ օդ, ինչպիսին է լեռնային արօտների մաքուր եւ զով օդը։ Այդ լեռնային օդը, հարուստ բուսականութիւնը, հարաւային տաք կլիման, Սեւ ծովի արեւելեան ափերի յարմարութիւնները ծովային լողարանների հետ միասին—առաջ են բերել մի շարք սանատորիաներ կամ առողջարաններ հիմնելու խնդիրներ։

Այն հանգամանքը, որ Կովկասը գտնվում է Պարսկաստանի եւ Թուրքիայի սահմաններին կից եւ առաջին կայարանն է լինում խօլերայի եւ ժանտախտի նման հիւանդութիւնների համար, կարեւոր է դարձնում, որ Կովկասի բժշկական կազմակերպութեան գործը հաստատված լինէր ամուր հիմքերի վրա, որ երկիրը միշտ պատրաստ լինէր կանգնեցնել այդ վտանգաւոր աղէտների մուտքը դէպի երկիրը եւ մաքառէր նրանց դէմ աջողութեամբ, երբ արդէն մտած կը լինեն երկրի մէջ։

Բացի այդ՝ բժշկական օգնութեան գործը երկրի խորքերում պահանջում է հիմնովին կերպարանափոխութիւն։ Հազարաւոր մարդիկ զուրկ են ներկայումս բժշկական օգնութիւնից եւ անկարող են դիմել բժիշկներին, որոնք ապրում են կենտրոնական մի քանի տեղերում, մի քանի տասնեակ, եւ երբեմն էլ մի քանի հարիւր վերստ հեռու իրանցից։ Իսկ եթէ ուշադրութեան առնէք այնպիսի հանգամանք, որ, օրինակ, սիֆիլիսի նման մի հիւանդութիւն մուտք է գործել ամենախուլ անկիւնները եւ հնձում է ժողովրդական թարմ ոյժերը, հասկանալի կը լինի թէ որքան կարեւոր է բժշկական օգնութեան գործի նպատակայարմար կազմակերպութիւնը։

Կայսերական կովկասեան բժշկական ընկերութեան վրա, որ առաջիկայ ժողովի նախաձեռնողը եւ կազմակերպողն է, մեծ պարտաւորութիւն կայ այնպէս տանել գործը, որ մեր երկրի բժշկական եւ առողջապահական էական խնդիրները լուրջ կերպով մշակվեին եւ գործնական ընթացք ստանային։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Շատ ճշմարտութիւններ մեր մէջ միանգամայն պարզ ու հասկանալի են, բայց միայն տեսականապէս, թէօրիայով։ Օրինակ, մենք գիտենք, որ գրականութիւնը չարչիների, մակլերների, ձեռնածու. մասխարաների գործը չէ, գիտենք որ վայելչութիւն, մաքրութիւն, ազնըւութիւն պիտի տիրէ գրական հրապարակում, որպէս զի գրականութիւնը մի բանի նման լինի, այսինքն դառնայ մեր առաջադիմութեան, մեր հոգեւոր վերածնութեան մի հզօր եւ գեղեցիկ գործօն։ Տեսէք թէ ինչպէս «Արեւելքի» յօդուածագիրներից մէկը շեշտում է այդ օրինաւոր եւ լուրջ գործունէութեան անհրաժեշտութիւնը.

Եթէ կուզենք մենք ալ մեր գործունէութենէն պատուաբեր հետք մը թողուլ գրականութեան պատմութեան մէջ, եթէ կը հաւատանք թէ գրականութիւնը անձնական քմահաճոյքի ու քէյֆի գործ չէ, եւ թէ, մեր հաճոյքէն, մեր զբօսանքէն վեր, ուրիշին օգտի ու գեղարուեստական հաճոյքին համար գրելու գիտակցութիւնը՝ աւելի բանաւոր է ու գնահատելի, հարկ է, որ ունենանք սթափ մտքի վիճակ, ըլլանք խորհրդածող լրջութեան, լրին ու յամառ աշխատութեան ու յարատեւութեան կուսակից, միշտ յիշելով թէ մեր նպատակն է ստեղծել մտաւորական ու գրական նոր կեանք, քան փորձել թերթեւ ու անոսի զբօսանքներ, մեր քմահաճոյքներուն գոհացում տալու համար։ Կեանքին մէջ, կուգայ անպատճառ օրը, ուր մարդ կը պարտաւորվի զգալու թէ՝ որքան մտաւորական եւ գրական ասպարէզին մէջ թերթեւ ու տարտամ է եղած,—սակայն այդ օրը ուշ է ալ, գործունէութեան օր ըլլալէ դադրած է ան,—ուժաթափութեան ու ամլութեան տխուր օրն է ան։

Ի՞նչն է պատճառ, որ մեր գրական աշխատութիւնները քէֆի, զբօսանքի համար կատարված գործեր են երեւում։ Այս հարցին պատասխանում է «Արեւելքի» միւս աշխատակիցը, յիշատակելով այն սոսկալի չարիքը, որ խոր արմատներ է դրել թիւրքահայ մամուլի մէջ եւ վարակել է նաեւ մեր կովկասեան հայ պարբերական հրատարակութիւնները։

Թերթ գիտեմ որ գաւառացի աննշան իմաստակի մը ներշնչեց սա բոլորովին յիմար գաղափարը թէ Պոլսոյ արդի գրականութեան փայլուն մէկ ներկայացուցիչէն շատ աւելի լաւ քննադատ մըն է. եւ գիտէք ինչու. որովհետեւ այդ մի եւ նոյն իմաստակը գոված էր իր աշխատակիցներէն չեմ գիտեր որը, յօդուածի մը մէջ, որուն ահռելի այլանդակութիւնը միայն կը յիշեմ այսօր։ Օրինակներ չեն պակսիր։ Դարձեալ աշխատակից մը գովելու համար թերթի մը խմբագիրը հրատարակութեան յանձնած է հետեւեալ անօրինակ, այլանդակ հատուածը.—«Եւ ամեն անգամ որ բեմը կելնես, կամ գրիչդ ձեռք կառնես, այդ նուիրական վսեմ վայրկեաններուդ մէջ հոգւոյդ վեհ աչքերով տես թէ երկինից հրեշտակաց խումբին մէջ մեծ ուրախութիւն կըլլայ, եւ պահապան հրեշտակները կուգան եւ անթառամ պսակ կը դնեն քու գլխոյդ վրա, արդարութեան սպիտակ անբիծ պատմուճանը կը ձգեն ուսերդդ վար...»։ Զեզի կը թողում խորհրդածել այս տողերուն վրա՝ որոնք սահմանափակ մտքի տէր քարոզչի մը նախանձը կրնան շարժել պարզապէս։ Եւ ասոնցմէ դուրս դեռ ինչեր. տակաւին ահագին խումբ մը կայ, որ ինք իրմով կը զբաղի, ինքզինքը առարկայ կընէ այդ ցաւագարութեանց՝ ոտանաւոր կամ արձակ գրուածքի մը մէջ՝ որ գրեթէ միշտ թերթ մը կը գտնէ հրատարակելու համար...

Հասկացա՞ք, թէ որն է այդ չարիքը։ Մենք չը գիտենք, թէ կ. Պոլսի ո՞ր թերթն է իր աշխատակցին փառաբանել այն ճիշդ որ յիմար եւ ապուշ խօսքերով, որ բերում է «Արեւելքի» աշխատակիցը։ Բայց մենք չենք զարմանում այդ զզուելի չողոքորթութեան վրա։ Մեզանում, Կովկասում, կան աւելի ողորմելի գեղաններ, որոնք խմբագիրներ են եւ իրանց աշխատակիցներին չնորհապարտ են լինում նրանով, որ մի գլուխ քծնում են նրանց առաջ, ստորութեան եւ կեղծաւորութեան հրէշաւոր ատիճաններին են հասնում իրանց խոնարհ երկրպագութիւններով։ Յայտնի է, որ տարիներից ի վեր Թիֆլիսում կատարեալ խաւարման մատնված, ամենքից արհամարհված մի ամսագիր կայ, որի սեփականատէրը, Շէյթան-բազարի մանրավաճառի նման, փրփուրը բերանին գովում ու փառաբանում է ամեն մէկին, որ մի բան տալիս է նրան։ Եւ ահա այդպիսի անձնաւորութիւնների հովանու տակ ծլում եւ ծաղկում են «կլասիկ» բանաստեղծներ, Բիսմարկի խելքը ունեցող տնտեսագէտներ, նոր, դեռ չը տեսնված վիպասաններ եւ այլն եւ այլն։

Բուն յանցաւորը միշտ այդ անմտած, ու թերեւս անգիտակից (!) հիւրասիրութիւնն է, որուն ուղղակի պատճառաւ գրական ըմբռնումը այսօր այնչափ տկարացած է մեր մէջ եւ մեր հասարակութիւնն ալ վարժուած է կարդալու անհունապէս տափակ գրուածքներ՝ որոնք օգուտ մը չունենալէն, հոգեկան վայելք մը չառթելէն զատ պատճառ ալ կըլլան որ մարդ զզուի գիրք կամ լրագիր մը ձեռք առնելէ։

Եւ սա, դժբախտաբար, ճիշդ է։ Եւ այս չարիքը ընդունակ է խեղդել, սպանել ամեն ինչ—թէ գրականութիւն, թէ միտք, թէ նոյն իսկ ընթերցող եւ հասարակութիւն...

ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Ախալքալաքի գաւառի երկրաշարժից վնասվածների օգտին.

Ալէքսանդրօպոլից՝ Մատթէոս վարդապետից (տես Նամակ Խմբագրութեան) 108 ր. 50 կոպէկ։

Զանգեզուրից՝ Մելիք-Ազարեանցի «Սիւնիք» պղնձահանքերում ծառայողներից 22 ր. 20 կոպ. (տ. «Մշակ» № 95)։

Վլադիվոստոկից՝ Շմաւոն Սանդրոսեանից 2 ր., Հէրիքնազ Լալայեանից 1 ր., Խոսրով Գրիգորեանից 5 ր. եւ Մարգարէ Լալայեանից 3 ր.։

Մազանդարանից՝ Իւան Վինկլէրից 18 ռուբլի։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՅՈՒՑԱՀԱՆԴԷՍԻՑ

Պարիզ, յունիսի 17-ին

Սենայի ձախ ափին է ձգվում այն փողոցը, որ իրաւամբ կոչվում է «Ազգերի փողոց» (Rue des nations)։ Այս գեղեցիկ փողոցում երկու կարգ շարված են դէմ առ դէմ ցուցահանդէսին պաշտօնապէս մասնակցող ազգերի պավիլիօնները, մի բան, որ պակասում էր 1889 թուի ցուցահանդէսում։ Մեծ ու փոքր, բարձր ու ցածր, զանազան ձեւի, ճաշակի շինութիւններ են այդ պավիլիօնները, իսկական պատկերներ ժողովուրդների քաղաքակրթութեան եւ հմտութեան զօրութեան ու մեծութեան։ Սրանց դասաւորութիւնն էլ անխորհուրդ չէ, նոյն իսկ վերին աստիճանի խելացի. այս բազմազան, անհամաչափ շէնքերը այնպէս են յաջորդում իրար, որ փոխադարձաբար լրացնում են իրար գեղեցկութիւն ու պատկերի ամբողջութեանը տալիս են նկարչական, գրաւիչ տեսք, որ մի եւ նոյն ժամանակ զուրկ չէ խորհրդաւորութիւնից, մտածել է տալիս։ Իրար կողքի լուռ շարված այս անկենդան զանգվածներն ասես իրանք ժողովուրդները լինեն, երկրագնդի հեռաւոր ծայրերում ապրող զանազան եղերը, որոնք նայում են գետի ալիքներին եւ կարծես որոնում են այն հարցի պատասխանը, թէ ինչու են իրանք այստեղ, այս անծանօթ ափերին, եւ ինչպէս է, որ այսքան դարեր առանձնացած, նոյն իսկ երբեմն թշնամի, այսօր յանկարծ յայտնվել են իրար կողքի, հաշտ, բարեկամաբար։

Թէեւ այս պավիլիօններում ցոյց է դրված զանազան երկիրների արդիւնարերութեան մի մասը, մի քանիսում, ինչպէս յունական պավիլիօնում, նոյն իսկ ամբողջ յունական բաժինն է զետեղված, բայց եւ այնպէս «Ազգերի փողոցի» այս շէնքերը աւելի ճարտարապետական հետաքրքրութիւն են ներկայացնում։ Գեղարուեստի այդ ճիւղով հետաքրքրվող անձը այստեղ կարողանում է մի հայեացքով եւ կօնկրետ ձեւով տեսնել այն, ինչ որ դարերի ընթացքում ազգերի հանճարը արտադրել է դանդաղ էվոլիւցիայով քաղաքակրթութեան զանազան աստիճաններում։ Ճարտարապետութեանը շատ լայն տեղ է տուած ներկայ ցուցահանդէսում, որովհետեւ գեղարուեստի զանազան ճիւղերից գուցէ ոչ մէկն այնքան զօրեղ կերպով չէ արտայայտում մի ժողովրդի քաղաքակրթութեան աստիճանը, որքան այս արուեստը, չը նայելով՝ որ իդէան մարմնացնելու, գեղեցկի պայմաններին գոհացում տալու տեսակէտից սա, համեմատելով իր միւս քոյր արուեստների հետ, աւելի դժուարութիւններ ունի թեւակոխելու։ Երբ արուեստագէտը միայն մի հատ նպատակ ունի՝ էսթետիկան, գեղեցկի իդէալը, ինչպէս նկարիչը կամ քանդակագործը, այն ժամանակ նա իր տաղանդի բոլոր ոյժը կենտրոնացնում է այդ մի կողմի վրա եւ բնականապէս հեշտութեամբ է հասնում գրական հետեւանքի. բայց երբ նոյն իդէալին ձգտելով հանդերձ արուեստագէտը ստիպված է նաեւ աչքի առաջ ունենալ կեանքի գործնական պահանջները, նիւթական պայմանները, խնդիրը շատ աւելի բարդ եւ աւելի դժուար լուծելի է դառնում։ Ճարտարապետութիւնը յատկապէս գեղարուեստի այն ճիւղն է, որի մէջ կեանքի գործնական, նիւթական պահանջները գերիշխող են եւ նրանց հետ հաշտեցնել է հարկաւոր գեղեցկի դաղափարը, մի բան, որ այնքան էլ հեշտ չէ, որովհետեւ գեղեցիկը միշտ ջընջվում է այնտեղ, ուր նիւթական կարիքներն անողոք են, հրամայող։ Ահա թէ ինչու ճարտարապետութեան եւ առհասարակ գեղարուեստի զարգացումը այնպէս անմիջական կապ ունի ժողովուրդների նիւթական բարօրութեան հետ եւ ինչու ճարտարապետութիւնն իր յետին ծայր կատարելութեան է հասել այն երկիրներում, ուր ժողովրդի բարեկեցութիւնը եւ դրա հետ միասին երկրի բնական պայմանները՝ կլիման, նիւթերի առատութիւնը ազատ են թողել արուեստագէտի ձեռքն ու գլուխը եւ նրա երեւակայութիւնը մի անզուսպ թափով սաւառնել է երազների աշխարհում, ֆանտաստիկ պատկերները խլել եւ քարի ոլորումներով, մարմարի ժանուածներով ազատ կերպով մարմնացրել է, հրաշալիքներ ստեղծել։

Կլիմայական պայմանների տեսակէտից վերին աստիճանի հետաքրքիր է այստեղ՝ «Ազգերի փողոցում» համեմատել հարաւային եւ հիւսիսային երկիրների ճարտարապետական արուեստը կամ յունա-հռովմէականն ու գոթականը։ Հարաւը՝ բնականից զրված լայն պայմաններում, ստիպված չը լինելով աչքի առաջ ունենալ բնութեան խստութիւնները՝ ձիւն, ցուրտ, անձրեւներ, եւ դրանցից առաջ եկող կեանքի գործնական, հրամայող կարիքները, կարողացել է իր ամբողջ ուշադրութիւնը, տաղանդի բոլոր ոյժը կենտրոնացնել գեղեցկի իդէալին բաւականութիւն տալու վրա։ Այսպէս են ստեղծագործվել Յունաստանի եւ Իտալիայի ճարտարապետական փառաւոր յիշատակարանները, պարզ, երբեմն անզարդ, բայց լայն, փռված, երբեմն անծածկ մի անհոգ վեհութեամբ։ Այստեղ բնութիւնը շատ լայն պայմաններ է տուել ճարտարապետութեան զարգացմանը, որպէս զի կարիք լինէր նրան գրաւիչ դարձնելու համար դիմել քանդակագործութեան օգնութեան։

Դրան բոլորովին հակառակ պայմաններ է ներկայացնում հիւսիսը։ Այստեղ կլիմայական խստութիւնները բազմայրել են կեանքի գործնական պահանջները եւ միւս կողմից նեղացրել են գեղարուեստական պահանջներին մնացած տեղը։ Շէնքը հիւսիսում կարծես չէ հարմարվում փռվել, լայնանալ. նա կծկվում, սղմվում է. նրա կտուրը խիստ շեղ է, աշտարակները սուր սուր եւ գեղեցկին բաւականութիւն տալու համար նա ձգվում է վեր վեր,

Սօչիից՝ Վաղարշակ Մինասեանից 9 ռուբ. 80 կոպ., որ հաւաքված է Գուրադերէ գիւղի հայերից, Արշակ Փաշայեանի միջոցով։

Թալին գիւղից, գործակալ Եղնիկ քահանայ Դիլանեանից 33 ռ. 76 կ.։ Նուիրատուներն են՝ Եղնիկ քահ. Դիլանեանց 2 ռ., Խաչատուր քահ. Տէր-Թադէոսեանց 1 ռ., Ա. Մանուկեան 2 ռ., Բ. Մխիթարեան 1 ռ., Գ. Ցարութիւնեան 1 ռ., Ս. Մարգարեան 25 կ., Գ. Բէկլաղարեան 30 կ., Բ. Տէր-Յակոբեան 30 կոպ. Ե. Մխիթարեան 50 կոպէկ, Ս. Մխիթարեան 50 կոպէկ, Ա. Յակովբեան 20 կոպէկ, Ն. Վարդէվանեան 20 կ., Մ. Եղիազարեան 50 կ., Գ. Թորոսեան 1 ռ., Ա. Գրիգորեան 20 կ., Յ. Մկրտչեան 2 կ., Ա. Օհանեան 25 կ., Ս. Սահակեան 20 կ., Թ. Տէր-Ցարութիւնեան 40 կ., Ս. Պողոսեան 25 կ., Կ. Մկրտչեան 40 կ., Մ. Մարգարեան, Յ. Մարգարեան, Ս. Գէորգեան, Մկր. Դիլանեան 10-ական կոպ., Մարտ. Դիլանեան 25 կ., Ա. Պետրոսեան 20 կ., Մ. Թադէոսեան 20 կ., Պ. Ղարիբեան 10 կ., Գ. Յովհաննէսեան 15 կ., Ն. Ցարութիւնեան 25 կ., Յ. Միլիկեան 15 կ., Ա. Ամիրխանեան 20 կ., Գ. Երանոսեան 20 կ., Գ. Մուսիկեան 50 կ., Ղ. Գէորգեան 20 կ., Մ. Բաղալեան 30 կ., Թ. Գալստեան, Ա. Սահակեան, Փ. Ենկոյեան 15-ական կ., Պ. Ցարութիւնեան 50 կ., Մ. Առաքելեան 10 կ., Ղ. Յովհաննէսեան 15 կ., Մ. Գէորգեան 1 ռ., Բ. Յակոբեան 10 կ., Բ. Տէր-Թադէոսեան 50 կ., Ս. Վարդանեան 30 կ., Մատթէոս քահ. Գէորգեան 1 ռ., Ս. Գալստեան 50 կ., Պ. Յովհաննէսեան 20 կ., Յ. Տէր-Մարգարեան 20 կ., Ս. Կարապետեան 15, Գ. Յովհաննէսեան 20 կ., Ա. Յովհաննէսեան 50 կ., Ա. Տէր-Դաւթեան 25 կ., Պ. Ղազարեան 20 կ., Ա. Յակովբեան 25 կ., Գ. Ցարութիւնեան 10 կ., Գ. Ասատուրեան 10 կ., Ն. Գէորգեան 20 կ., Խորէն քահ. Տէր-Կարապետեան 1 ռ. 50 կ., Ա. Բէջոզլեան 1 ռ., Գ. Մանուկեան 40 կ., Ա. Նահապետեան 35 կ., Դ. Կիրակոսեան 50 կ., Մ. Սիմոնեան 50 կ., Յ. Սիմոնեան 30 կ., Թ. Յովհաննէսեան 20 կ., Ե. Յովհաննէսեան, Յ. Գրիգորեան, Յ. Մելիքեան, Ա. Տէր-Համբարձումեան 20-ական կոպ., Վ. Մկոյեան 40 կ., Ե. Աւետիսեան 30 կ., Մ. Յովհաննէսեան 25 կ., Ա. Աւետիսեան 25 կ., Դ. Վարոսեան 5 կ., Ս. Մալխասեան 30 կ., Յ. Ինկոյեան 30 կ., Մ. Ցարութիւնեան 5 կ., Ս. Յովսէփեան 15 կ., Բ. Սամուէլեան 25 կ., Ա. Մանուկեան 15 կ., Ս. Մատոյեան 20 կ., Ա. Խնկոյեան 25 կ., Մ. Սիմոնեան 50 կ., Զ. Կարապետեան 20 կ., Ա. Սարգսեան 15 կ., Ս. Սարգսեան 11 կ., Գ. Յորոյեան 15 կ., Ա. Խաչատեան 20 կ., Մ. Նահապետեան 20 կ., Ն. Մելքոնեան 10 կ., գաղթական Գալուստ 10 կ., գաղթ. Մկրտիչ 10 կ., գաղթ. Կարապետ 8 կ., գաղթ. Մինաս 10 կ., գաղթ. Աւետիս 10 կ., Մ. Քոչարեան 55 կ.։

Ընդամենը 203 ռուբ. 26 կոպ.։

Մինչեւ այժմ ստացել ենք 35,207 ռուբլի 41½ կոպ.. երեք ոսկի ռուպի եւ 50 իտալական լիրա։ Ուղարկել ենք 35,000 ռուբլի, 3 ոսկի ռուպի եւ 50 իտալական լիրա։ Մեզ մնում է 207 ռուբ. 41½ կոպ.։

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

—

Յունիսի 18-ին

Տիկին Սավինայի ներկայացումները վերջացան. նրանք ընդհանուր առմամբ—թէ խաղի եւ թէ մասնաւոր մուտքի կողմից—անբաւարար էին։ Եթէ ճշմարիտ է այն առածը, թէ «որին շատ է տրվել, նրանից շատ էլ պահանջվում է», ապա պէտք է խոստովանենք, որ յարգելի տիկին Սավինան շատ ունենալով հանդերձ՝ քիչ տուեց։ Բեպերտուարի եւ անսամբլի թուլութիւն—ահա գլխաւոր պակասութիւնը։ Աւելացրէք դրան եւ տեղերի բարձր գները, եւ պատկերը գրեթէ կատարեալ կը լինի. կը մնայ միայն մի «բաց», դա էլ վերաբերում է յարգելի հիւրի անձնականին։ Գաւառական համեստ թղթակցի ոչ պակաս համեստ պաշտօնին շատ էլ յարմար չէ գրել մի նշանաւոր դերասանուհու խաղի մասին, նպաստաւոր կամ աննպաստ, երբ նա, այդ դերասանուհին, ունի իր յետեւը 25-ից աւելի երկար տարիների փորձառութիւն, փառաւոր անուն եւ փառաւոր անցեալ՝ բեմական գործունէութեան մէջ։

Ինչ կուզէք անուանեցէք սա—նախապաշարում, թէ իսկական համեստութիւն է թղթակցի կողմից—իրողութիւն է, որ տ. Սավինան աջողութիւն չունեցաւ մեզանում. նա մինչեւ անգամ մի հասարակ ծաղկեփունջ էլ չը ստացաւ, երբ առաջին անգամ բեմ ելաւ։ Այս կէտում բաղուցիները կատարելապէս պախարակելի են, ի հարկէ։ Խաղացին «Տատեանա Բեպինա», «Գաղտիարական կին», «Հայրենական տուն», «Կամելիազարդ տիկին», «Օլ'գա Բանցեվա» պիէսները, որոնց մէջ առաջնակարգ դերերը խաղում էր ինքը տիկին Սավինան, որը ունի վերին աստիճանի մշակված, չափի, կշռի տակ դրված բեմական ձեւեր, շարժումներ, որոնք սակայն,—ասենք միջանկեալ—չը կարողացան տալ Մարգարիտ Գոթիէի պէս կանանցի բոլոր բարիքները անսահման կերպով վայելելող—«ծախու» եւ ապա «սիրող» կնոջ կրակոտ տիպը։ Եւ դա հասկանալի է։ Ինչպէս ասացինք, յարգելի տիկնոջ խաղի մէջ ընդհանրապէս առաջին տեղն են բռնում տակը, չափը, սահմանը նոյն-իսկ այնպիսի զգայմունքների հետ, որոնք «չափի» «կշռի» հետ ընդհարվելիս կորցնում են իրանց «բնական լինելու» երկու-երրորդ մասը։ Զգայմունքը արհեստականօրէն ծնեցնել չէ կարելի—նա մի յատկութիւն է մարդկային բնաւորութեան մէջ, որին երբ չափի, կշռի տակ եւ գնում որոշ գործողութիւնների ժամանակ, այնպիսի գործողութիւնների, որոնք անմիջական կապ ունեն մարդու հոգու, սրտի եւ նրա ամբողջ գոյութեան հետ, «բնական» լինելուց չեղվում է եւ հետեւաբար ցանկալի տպաւորութիւնը չէ թողնում։ Այդպէս էր յարգելի տիկնոջ խաղը գրեթէ բոլոր պիէսներում. Թիֆլիսի լրագիրների տուած գնահատութիւնը այդ տեսակէտից միանգամայն ճիշդ է եւ չէ կարելի չը խոստովանել, որ որոշ չափով տիկին Սավինան իր անաջողութիւնով դրան է պարտական։

Դուք պիտի զարմանաք, ընթերցողներ, եթէ ասեմ, որ մինչեւ այժմ, յունիսի 17-ը, դեռ ամառ չունենք Բագու, այն ամառը, որ սովորաբար սկսվում է մարտի սկզբներից։ Երբեմն երբեմն տեղացող անձրեւները, մթագնած, ամպամած երկինքը, որոտում, կայծակ, եւ դրանց անմեկին ընկեր, նշանաւոր «նորդ» կոչված քամին, մեր միակ փրկարար միջոցներն են այժմ տաքի դէմ։ Սակայն այն գիտակցութիւնը, թէ վաղը չէ միւս օրը ստիպված պիտի լինենք քաշվել մեր խորշերը արեւակէզ չը լինելու համար՝ այդ գեղեցիկ օրերի տպաւորութիւնը կիսով չափ պակասեցնում է։

Սլաք

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ալէքսանդրօպոլ, մայիսի 31-ին

Ներփակած ուղարկելով Ախալքալաքի երկրաշարժից վնասվածների օգտին ինձ ժողովված դրամներից հարիւր ութ ռ. յիսուն կ. (108 ռ. 50 կ.) հասցնելու ուր հարկն է, առիթից օգտվում եմ համառօտ հաշիւ տալու իմ ստացած եւ տեղ հասցրած գումարների մասին։

1) Քաղաքից՝ գանձանակագրամ, «աւետիք» շրջելուց, ժողովահաւաքութիւնից եւ քահանաների նուէրներն՝ 461 ռ. 73 կ., 2) Եօթիւրաց պատկերի եւ նախկին աղքատանոցի արդիւնքից՝ 250 ռ., 3) գործակալութիւններից՝ 2105 ռ. 42 կ.։ Ընդամենը դրամով ստացել եմ 2817 ռ. 15 կ.։ Բացի սրանից, շատ գիւղեր անկարող լինելով դրամ տալ, խոստացել են հունձի ժամանակ հատուցանել ցորեն եւ գարի, որոնց վաճառքից կարող է գոյանալ 150—200 ռուբլի. այդ յուսով ես փոխարինաբար վերցրել եմ հարիւր ռուբլի, արժեղէնը վաճառելուց յետոյ վճարելու պայմանով։ Հետեւաբար ես ունեցել եմ յօգուտ արկածեալների ստացած 2917 ռ. 15 կ., որից անձամբ Ախալքալաքի կոմիտէին յանձնել եմ 1642 ռ. 57 կ., Ալէքսանդրօպոլից նոյն կոմիտէին ուղարկել եմ 1120 ռ 11 կ., այժմ ուղարկում եմ խմբագրութեանդ՝ 108 ռ. 50 կ. եւ հեռագիրների, դրամների եւ իրեղէններ տեղափոխելու, իմ Ախալքալաք գնալու եւ գիւղեր շրջելու համար ծախսված է 45 ռ. 97 կ.։ Մտադիր լինելով, խոստացած ցորենը եւ գարին ժողովելուց եւ հաշիւները փակելուց յետոյ, տպագրել մանրամասն հաշիւ եւ բաժանել նուիրատու պարոններին ի միամտութիւն՝ խնդրում եմ այժմ մի անկիւն չնորհէք ձեր թերթի մէջ այս համառօտ հաշուին։

Օրհնելով նուիրատու ժողովրդեան առատաձեռնութիւնը, որ գիտէ եղբայրակցի թշուառութեան դէպքում մոռանալ իր սեփական ցաւերը, յայտնում եմ եւ իմ խորին չնորհակալութիւնը այն պատուարժան քահանաներին, տիկիններին, օրիորդներին եւ պարոններին, որոնք չը զլացան իրանց աջակցութիւնն ինձ թէ դրամ եւ թէ հագուստեղէն ժողովելու։

Մատթէոս վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի նահանգապետ Սվեչին իր ճանապարհորդութեան ժամանակ Ախալքալաքի գաւառում այցելեց երկրաշարժից վնասված տեղերը, ծանօթանալով տների շինութեան համար անհրաժեշտ բոլոր կարեւոր հարցերի հետ։ Նա այցելեց Բօրժօմի կալուածքի այն կէտերը, որտեղ պատրաստված են շինութեան համար գերաններ եւ տախտակներ, հարց ու փորձ արեց գիւղացիներին։ Վերջիններս յայտնեցին, որ նրանք շատ ուրախ են, որ գիւղերը պէտք է շինվեն կանոնաւոր կերպով, ուղիղ փողոցներով եւ տները պէտք է լինեն հողից բարձր եւ եւրոպական վառարաններով։

—

Մոսկվայի լրագիրները հաղորդում են, թէ Մոսկվայի հնագիտական ընկերութիւնը նոր կանոնների ծրագիր է կազմել, որոնցով արգելվում է Ռուսաստանի հնագիտական իրերի արտահանումը, ուրիշ երկիրներ։ Բացի այդ ենթադրվում է արգելել օտարազգի հետախուզողներին պեղումներ անել Ռուսաստանում։

—

Հնդկաստանի եւ Անգլիայի մէջ գոյութիւն ունեցող հեռագրական հաղորդակցութեան ընկերութիւնը իր կապած պայմանով պարտաւոր էր բանալու Ռուսաստանում երեք հեռագրական դպրոց։ Այժմ, ինչպէս լսում ենք, այդ դպրոցներից մէկը կը բացվի Թիֆլիսում։ Դրպրոցում կընդունվեն քաղաքային դպրոցներում աւարտողները։

—

«Пр. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրութիւնը գործածութիւնից հանեց արտասահմանեան յարաբերութիւնների համար ֆինլանդական պօստային նշանները։ Ֆինլանդիայից արտասահման ուղարկվող թղթակցութիւնների վրա պէտք է կայսերական մարկաներ լինեն օգոստոսի 1-ից։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ նախագծվում է ռուսաց բոլոր համալսարաններում հիմնել ֆիզիկական աշխարհագրութեան եւ օդերեւոյթաբանութեան ամբիոններ։

—

Մոսկվայում, «Рус. Вѣдомости» լրագրի առաջով, իշխանուհի Մ. Ա. Ուրուսովայի նախաձեռնութեամբ հիմնվել է մի նոր ընկերութիւն, որի նպատակն է նպաստել կանանց կրթութեան եւ գործունէութեան՝ այդգործութեան եւ բանջարաբուծութեան ասպարէզում։ Ընկերութիւնը, կանանցագրութեան համաձայն, իրաւունք ունի այդ նպատակով բանալ այդգործական դպրոցներ կանանց համար, թերթ հրատարակել եւ այլն։ Անդամավճարը 5 ռուբլի է։

—

ՎԵՐԻՆ-ԱՂԴԱՆԻՑ մեզ գրում են. «Բաւական չէր կարկուտի ան ու սարսափը, հիմա էլ մուկն է սպառնում մեր ցանքերին։ Նա երեւացել է դաշտի զանազան մասերում եւ սկսել է զգալի վնասներ տալ. հասկը հաղիւ է հասնում եւ ահա երկրորդ օրը տեսնում էք միայն նրա դատարկ ցողունը։ Մեր գիւղացիները, որոնք բնութեան իւրաքանչիւր արհաւիրք իրանց «ծովացեալ մեղաց» համար Աստուծուց հասած պատիժ են համարում, շտապեցին Գօշ Մխիթարի «լոյս գերեզմանից» հող բերել եւ ցրվել իրանց արտերում՝ մկնից ազատվելու համար»։

—

ՄԵՐՎԻՑ մեզ գրում են. «Մերվի ծխատէր քահանայի մահվան պատճառով, մեզանում բարձրացել է քահանայական հարց։ Այժմ, քանի երբ եւ իցէ, քահանայի բացակայութիւնը մեզանում զգալի է։ Մեր հասարակութիւնը՝ անցեալներում երկու նիստ ունեցաւ եւ որոշեց դիմել Աստրախանի թեմի առաջնորդ Սեդրակեան արքեպիսկոպոսին, որպէս զի մեզ վրա մի մշտական քահանայացու նշանակէ։ Ցուսով ենք, որ առաջնորդը կը բարեհաճէ ժողովրդի

դէպի երկինք, զարդարում է իր պատերը անհամար քանդակներով։ Այսպէս է գոթական ճարտարապետութիւնը, որ միշտ ներկայացնում է մի հրաշալի խառնուրդ քանդակագործութեան հետ եւ սրա գեղեցկութիւնը բոլորովին այլ է։

Գոթական արուեստի երկու հրաշալի յիշատակարաններ կան «Ազգերի փողոցում»—իտալական եւ բելգիական պավիլիոնները։ Սրանցից պակաս հետաքրքիր չեն նաեւ միւս ազգերի պավիլիոնները, որոնցից գլխաւորների մասին կը գրեմ ժամանակին, բայց իտալականը հէնց առաջին տեղն է բռնում փողոցի ծայրում, եւ այսօր գրում եմ նրա մասին։

Վերածնութեան դարի մի հսկայական կաթեդրալ է ներկայացնում այդ շէնքը. արտաքին պատերի անհամար զարդերը, քանդակները, արձանները գեղեցիկ որմախորշերում, սիւները, առամնաւոր եզրերը, բոլորը, բոլորը միասին խառնվում, խճճվում են, փարում են շինութեան գունաւոր պատերին եւ կարծես ձգվում են դէպի երկինք ինչպէս մի մեծ ծառի ճիւղաւորութիւն. գոթական շէնքը քարեայ անտառ է։ Զորս գմբէթներ զարդարում են շեղ կտուրի չորս անկիւնները, իսկ մէջտեղում ամենի վրա իշխելով բարձրանում է մայր գմբէթը, որի կատարին յաղթական ձեւով նըստած է մի թեւատարած արծիւ։ Արտաքինին համապատասխանում է նոյնքան գեղեցիկ ներսը։ Այստեղ գեղեցիկ է մանաւանդ սիւնազարդ գալլերէան, որ կազմում է չուրջանակի կախված վերնատուն եւ համարվում է շինութեան երկրորդ յարկ։

Իր պավիլիոնում Իտալիան ի ցոյց է դրել միմիայն յախճապակեայ իրեր, գունաւոր ապակուց եւ կրիստալից շինված զարդի եւ մնտեսութեան առարկաներ, թրծած կաւի արձաններ եւ ամաններ եւ բրօնզի մի ամբողջ արդիւնաբերութիւն։ Սրանից դուրս Իտալիան մասնակցում է 15 զանազան դրուպաներում եւ երեք միացեալ բաժիններում. բոլորի համար ծախսել է 900 հազար ֆրանկ։ Այստեղ լայն տեղ գրաւելով, այդ երկիրը կարողացել է բնականապէս իր ամբողջ արդիւնաբերութիւնը հրապարակ հանել, ինչպէս եւ հնար է ունեցել պաշտօնական պավիլիոնը աւելի կամ պակաս գեղարուեստական իրերին յատկացնել։ Այստեղ իտալական մի քանի նշանաւոր քաղաքներ—Ֆլորենցիա, Միլան, Վենետիկ, Նէապոլ—մրցութեան են դուրս եկել գեղարուեստի ասպարէզում։

Ֆլորենցիան ուղարկել է թրծած կաւէ առարկաները, կատարեալ գեղարուեստական գործեր, վախենում եմ ասել բրուտութեան արուեստի արտադրութիւններ, որովհետեւ դրանով կարող եմ մեր երկրում մոքերի չփոթառաջ բերել, քանի որ մեր բրուտների արուեստը սափոր, կարաս ծեփելուց հեռու չէ գնում եւ հետեւապէս պիտի կարծվի, թէ իտալական բրուտներն էլ ուղարկել են իրանց կժերն ու կճուճները։ Ցունական եւ հռոմէական դիցաբանութիւնն է նիւթ տուել այս կաւագործներին, արձաններ, բիւստեր, ամբողջ դրուպաներ են պատրաստված կաւից եւ այն՝ կլասիկ ճաշակի նրբութեամբ եւ ճշտութեամբ։ Կան զանազան մեծութեան եւ ձեւի նուրբ ամաններ, սիրուն վազեր, ծաղկամաններ ճաշակաւոր քանդակներով եւ նկարներով զարդարված, այն աստիճան կատարեալ, այնքան գեղեցիկ, որ մարդ դժուարանում է հաւատալ, թէ դրանք ցեխից պատրաստված առարկաներ են։

Յախճապակեայ իրերի մի հարուստ ժողովածու բռնում է պավիլիոնի մի այլ մասը. դարձեալ արձաններ, դրուպաներ, բազմատեսակ զարդ-անօթներ, վազեր, բոլորն էլ զարդարված գունաւոր նկարներով։ Այս էլ Ֆլորենցիայի արդիւնաբերութիւնն է։

Բրօնզը պատկանում է Նեապոլին։ Պոմպէան շատ հեռու չէ այդ քաղաքից. մոխիրների տակից դուրս հանված գեղարուեստական առարկաները մի հետաքրքիր ժողովածու են կազմում Նէապոլի միւզէում։ Նէապոլցի արտիստները հրաշալի կերպով չահագործել են այդ կլասիքական միւզէն։ Բրօնզէ արձանները, բիւստերը, ամանները, ծաղիկների վազերը յայտնի ընդօրինակութիւններ են Պոմպէից հանված մոդելների։ Նմանութիւնն այնքան ապջողված է, որ մարդ կարծում է թէ հէնց այս ցոյց դրված իրերն են 1800 տարի մոխրի եւ լաւայի տակ ծածկված մնացել։ Պոմպէան առատ նիւթ է մատակարարել նաեւ Նէապոլցի ոսկերիչներին։ Այստեղ ի ցոյց դրված ոսկեայ զարդերը՝ մատանիներ, շղթաներ, մանեակներ, օղեր, բոլորն էլ Պոմպէից հանված մոդելներ, ընդօրինակութիւններ են։

Վենետիկն ի ցոյց է դրել իր կրիստալի սիրուն արդիւնաբերութիւնը,—բաժակներ, ջահեր, սեղանի ամենատեսակ զարդեր, ամաններ, ամենն էլ նուրբ ճաշակով եւ արուեստով պատրաստված։

Վերնայարկի գալլէրէի պատերը ամբողջապէս ծածկված են շինութիւնների մակարդակներով, գծագիր պատկերներով, որմազարդերի նկարներով, կատարված զանազան դպրոցների աշակերտների ձեռքերով։ Այստեղ սեղանների վրա դասաւորված են նաեւ մասնագիտական ինստիտուտների, դպրոցների աշակերտական աշխատանքները ալբոմի ձեւով։ Երկաթագործական, նկարչական, երկրագործական, հանքաբանական աշխատանքների մի ամբողջ հարուստ ժողովածու կայ, որ շատ ուշագրաւ կարող է լինել այդ մասերով հետաքրքրվողների համար։

Իտալական պավիլիոնն իր ամբողջութեամբ, թէ արտաքուստ եւ թէ ներքուստ, մի գրաւիչ գեղարուեստական գործ է եւ այցելուն գիտական հետաքրքրութիւնից դուրս նաեւ էսթետիքական բաւականութիւն է ստանում։

Արդեօք ծանր է, թէ դիպուածի արդիւնք, որ գոթական ճաշակի այդ հրաշալի շէնքի կողքին, որ ներկայացնում է իտալական պավիլիոնը, տնկված է մի մահմեդական ժկիթ, որպէս թիւրքական պավիլիոն։ Զարմանալի է,

ցանկութեան համեմատ մեզ համար կարդելու այնպիսի մի հոգեւորական, որը ժամանակի պահանջի համեմատ կարողանայ հովուել իր հօտը, մանաւանդ, որ անդրկասպեան երկրի պէս տեղում աւելի շատ զգալի է զարգացած քահանայի անհրաժեշտութիւնը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՑԻՑ

—

Նիւշատել, յունիսի 22-ին

Գեղեցիկ է գարունը ամեն տեղ, սակայն Շվէյցարիայում, կարծէք՝ մի առանձին շուք ունի նա։ Արդեօք այդ շուքը քաղաքակրթութեան արդասիքն է, թէ բնութիւնը առանձնապէս թափել է իր պերճութիւնը Շվէյցարիայի վրա։ Մարդ սքանչանում է, չէ կշտանում նայելուց։ Ամեն տեղ դալար, ամեն տեղ ծաղիկ, կապուտակ երկինք, ամեն տեղ լճեր ու լճակներ՝ իրանց վճիտ ջրերով։

Շվէյցարացին լինելով բնութեան սիրահար՝ քաջ գիտէ վայելել այդ գեղեցկութիւնը ազատ ժամերին՝ ձգելով իրան բնութեան հրաշալի գիրկը։ Տեսնում էք ոտն կամ կիրակի օրերին՝ իւրաքանչիւր ընտանիք դիմում է կայարան կամ լճափը՝ երկաթուղիով կամ շոգենաւով ճանապարհորդելու զէպի մօտակայ վայրերը։

Զը նայելով, որ բոլոր երեխաներն էլ, առանց բացառութեան, հարուստ ու աղքատ, ճաշակում են այդ քաղցր զուարճութիւնը տարին մի քանի անգամ իրանց ծնողների հետ, սակայն դպրոցական վարչութիւնները դարձեալ կազմում են առանձին դպրոցական զբօսանքներ իրանց սաների համար։ Եւ ահա այդ դպրոցական զբօսանքների մէկին ընկերակցելու առիթն ունեցայ, իբրեւ օրիորդների կօլեժի ուսանողուհի, եւ աւելորդ չեմ համարում ներկայացնել դրա մի փոքրիկ նկարագիրը։

Նիւշատելի կայարանը, յունիսի 15-ին, առաւօտեան ժամը $4^3/_4$ ներկայացնում էր հետաքրքրական տեսարան։ 250-ից աւել նորատի շվէյցարուհիներ, իրանց առողջ կարմիր այտերով, կապուտակ, մեղմ աչքերով, պարզ, բայց մաքուր ու ճաշակով հագնված (համազգեստ չկայ), աշխոյժ ու ազատ շարժուածքով գրաւում էին ուշադրութիւն։

Երբ որոշած ժամանակը լրացաւ (այստեղ սովորութիւն չը կայ մեկնելու նշանը զանգակով տալ, այլ ժողովրդի մէջ չրջում է ծառայողը եւ բարձրաձայն յայտնում մեկնելու ժամը) ուսուցիչը նշան տուեց՝ մտնելու վագոնները։ Զը կար մեր կողմերի սովորական միմեանց հրելը, առաջ անցնելը՝ տեղ բռնելու համար. ամենքը իրանց վարժուհիների հետ, առանց աղմուկի, մտան վագոնները, տեղաւորվեցին ու սկսեցին քաղցր զրոյց անել միմեանց հետ կամ դիտել չրջապատող բնութիւնը։

Գնացքը, քերելով Նիւշատելի գեղանկար ափերը, առաջ էր սլանում։ Իրաւ որ աքանչելի է Նիւշատելը, որ գտնվում է համանուն լճի ափին, Շօտժօնտ սարի զառիվայրի վրա, 430 մետր բարձր ծովի մակերեւոյթից, ամֆիթեատրօնի նման չինված գեղեցիկ պարտիզապատ տներով, խաղողի այգիներով։ Դիժայը՝ հեռուն փռված Ալպեան հոյակապ լեռնաշղթան, որը պարզ օրերին ցոյց է տալիս չրջակայքին իր փառքը—յաւիտենական ձիւնով պատած Մօն-Բլանը։

Նիւշատելին յաջորդեց Բիէն լիճը, աւելի փոքր, բայց ոչ պակաս սիրուն։ Ամեն մի գըղեակ կամ նշանաւոր վայր տեսնելիս, ուսուցիչները կամ ուսուցչուհիները հաւառօտ կերպով պատմում էին անցեալ հերոսների անձնազոհութիւնները եւ ոգեւորում աշակերտուհիներին եւ ապա երգում միասին մի յարմար երգ։ Հիանալի էր տեսնել, թէ ինչպէս աշակերտուհիները, առանց քաշվելու, շնորհալի կերպով մօտենում էին ուսուցիչներին կամ վարժուհիներին, նոյն-իսկ տեսչին հարցնում իրանց հետաքրքրող երեւոյթների մասին, եւ նրանք սիրով բաւականութիւն էին տալիս նրանց հարցասիրութեան։ Ժամը 11-ն էր, որ հասանք Ինտէրլակէն, Բերն այցելելուց յետոյ։

Ինտէրլակէնը ներկայացնում է մի մեծ, իսնամված պարտէզ։ Մէջտեղից լայն ճանապարհ, որի երկու կողմը չինված են չինութիւնները, մի կողմը խանութները, միւս կողմը սքանչելի հիւրանոցները՝ գեղեցիկ ծաղիկներով զարդարած պարտէզներով, աւազաններով, արձաններով. մի խօսքով մի դրախտ, ուր հարիւրաւոր հարուստ ճանապարհորդներ, մանաւանդ անգլիացիներ, հանգիստ են առնում ձմեռվայ կեանքից յետոյ։ Ուսուցիչը կանխաւ որոշել էր մի գողտրիկ, գեղեցիկ հիւրանոց, որի պարտէզի մէջ սեղանների չուրջը տեղաւորվեցին ամենքը՝ ճաշելու համար։ Հրաշալի է շվէյցարուհու ինքնուրոյնութիւնը. ամենքը, մեծ ու փոքր, առանց քաշվելու, ազատ ու հաւարձակ, ինչպէս փորձված մարդիկ, քաշեցին մի-մի սեղան, նստեցին չուրջը, պատուիրեցին սպասաւորող կանանց զովացուցիչ ըմպելիքներ՝ դարեջուր, օշարակ կամ կերակուր։ Ճաշեցին չը-նորհալի կերպով, վճարեցին, սպասաւորուհուն անգամ չը մոռացան վարձատրելու, յետոյ վեր կացան, գնացին մօտակայ խանութները՝ բաց նամակներ առնելու. եկան հանեցին մատիտները եւ սկսեցին գրել հաւառօտ նամակներ՝ իրանց ընկերներին կամ ծանօթներին, բարեւներ ուղարկելով Ինտէրլակէնի գեղանկար վայրերից։ Ո՛րքան ինքնուրոյնութիւն, որքան գիտակցական ազատութիւն 10—12 տարեկան երեխաների կողմից, թողած մեծերը։ Թերեւս հարցնէք, թէ ուր են տեսուչը կամ ուսուցչական խումբը. նրանք բոլորն էլ ներկայ են, բայց երբէք թոյլ չեն տայ իրանց մանելու նրանց անհատական գործերի ու իրաւունքների մէջ։ Մարդու սիրտը ճնչվում է, երբ ակամայ այս ամենը հաւեմատում է այն իրականութեան հետ, որ տիրում է մեր երկրում...

Ճաշից յետոյ տեսուչը տարաւ մեզ մի քանի գեղեցիկ տեսարաններ եւս ցոյց տալու, եւ յետոյ բարձրացանք Համվէգիլուհ սարը, որտեղից երեւում էր Ինտէրլակէնը իր բոլոր աքանչելի տեսարաններով—սար, ձոր, գետ, լիճ, երկաթուղի, շոգենաւ, գեղանկար տեսարան։ Այդտեղ եկել էր Բերնից մի մասնաւոր գերմանական երաժշտական խումբ, նոյնպէս երկու սեռից, որ երգեց գերմանական մի քանի գեղեցիկ ազգային երգեր։ Ժամը $7^1/_2$ էր, որ կրկին մտանք շոգենաւ. $8^1/_2$-ին հասանք Բերն, ուր կայարանի ճաշարանում սեղանները արդէն պատրաստ էին 250 հոգու համար։ Ընթրիքից յետոյ ճանապարհ ընկանք ուղղակի Նիւշատել, ուր կայարանի մօտ ու ճանապարհի երկու կողմը արդէն կանգնած էին ծնողները, որոնք եկել էին տուն տանելու իրանց զաւակներին, զոհ նրանց աջող ճանապարհորդութիւնից։

Օր. Ն. Յակոբեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սէուլից ստացված տեղեկութիւններին նայելով, Կորէայում սաստկանում է թշնամական տրամադրութիւնը դէպի քրիստոնեաները։

—Հնդկաստանի կառավարութիւնը, ինչպէս հաղորդում են անգլիական լրագիրները, խիստ դիմումներ է արել Աբդուրահման էմիրին այն առիթով, որ անդադար մեծ քանակութեամբ զէնքեր են ներմուծվում Աւղանիստան, այն պատրուակով, իբր թէ վախենում են ռուսաց արշաւանքից։

—Հեջասեան երկաթուղու կառուցման համար թիւրքաց կառավարութիւնը դիմում է հանգանակութեան։ Սուլթանի տպարանում տպվում են 15,000,000 տոմսակներ 20—100 ղուրուշանոց չքաւոր եւ 5—10 լիրանոց ուռնեւոր միւսիւլմանների համար։ Երբ որ այդ տոմսակները տարածվեն, կը տպվեն նոր տոմսակներ անսահման քանակութեամբ։ Տոմսակները պէտք է տարածվեն աշխարհիս բոլոր միւսիւլմանների մէջ Սամբուլի կենտրօնական մահմեդական կոմիտէի յատուկ գործակալների միջոցով։ Բոլոր մինիստրութիւնները չը-ջաբերականներով կարգադրութիւններ են արել իրանց ստորադրեալների չրջանում, որպէս զի նրանք աջակցեն այդ տոմսակների տարածման գործին։ Բէյրութի վալին յանձն է առել տարածել 40,000 լիրայի տոմսակներ։ Զմիւռնիայի տեխնիկական դպրոցի տեսչութիւնը վիճակախաղներ է սարքելու այն հաշուով, որ ամեն վիճակախաղ տայ 5,000 լիրայի արդիւնք եւ այլն։ Երկաթուղին կը սկսվի Կադէմ-Շէրեֆից, որ Մեկկա գնացող նուիրական կարաւանի սկզբնակէտն է։

—Եմէնի մի քանի սանջակներից տեղեկութիւններ են ստացված, թէ բեդուինները, զինված արագահար հրացաններով, ապստամբվել են, հարկ չեն վճարում եւ չեն ուզում ճանաչել թիւրքաց իշխանութիւնը։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

21 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Փոխ-ծովապետ Ալեքսէեվի հեռագիրը Պօրտ-Արտուրից, յունիսի 18-ից. «Յունիսի 16-ին վերադարձաւ այստեղ դէսանտը, որ գտնվում էր 2-րդ կարգի կապիտան Զագինի հրամանատարութեամբ ծովապետ Սէյմուրի զօրաբաժնում, որ բաղկացած էր ընդամենը 2000 մարդուց, որոնց մէջ 312 հոգի մերոնցից էին։ Զօրաբաժինը դուրս էր եկել Տեանձինից մայիսի 26-ին եւ երկաթուղով հասել էր Լօնֆօնգ կայարանին, շտկելով ճանապարհը եւ անդադար ենթարկվելով բռունցքականների յարձակումներին։ Յունիսի 2-ին ռուսաց վաշտը մասնակցում էր ճակատամարտին, ազատելով անգլիացիներին, որոնք թողնված էին յետեւում ճանապարհը պահպանելու համար։ Յունիսի 5-ին չինացիների կանոնաւոր հեծելազօրքը առաջին անգամ յարձակում գործեց եւ յետ մղվեց մեր եւ գերմանացիների ձեռքով։ Գրաւված են մեծ թիւով զէնք եւ դրօշակներ։ Այն ժամանակ Սէյմուր վճռեց նահանջել ափով, որովհետեւ երկաթուղին աւերված էր։ Յունիսի 10-ին զրաւեցինք կուով թնդանօթներով եւ հրացաններով լի Սիչու զինարանը, ուր եւ ամրացանք։ Չինացիք երկու անգամ յարձակում գործեցին, բայց յետ մղվեցին։ Յունիսի 13-ին Սէյմուրին ազատեց 12-րդ գնդի բատալիօնը փոխ-գնդապետ Շիրինսկիի հրամանատարութեամբ։ Զինարանը եւ ռազմամթերքները աւերված են։ Ընդամենը զօրաբաժնից սպանված են երկու օֆիցէր, մէկը գերմանացի, միւսը ամերիկացի, եւ 10 հասարակ զինուոր։ Վիրաւորված են 4 օֆիցէր եւ 22 նաւաստի։

ԲԵՐԼԻՆ։ Գերմանական հիւպատոսը հաղորդում է, որ օտարահպատակների թաղը Տեանձինում նորից պաշարվում է եւ ռմբակոծվում է։ Կանայքը եւ երեխաները հեռացրված են։ Զինական զօրքերը յարձակում գործեցին երկաթուղու վրա։ Կամուրջները քարուքանդ են արված, բայց ջրային հաղորդակցութիւնը Տակուի հետ չարունակվում է։ Մուկդէնի եւ Նիւժուանի միջեւ եղած միսիոնները եւ երկաթուղիական կամուրջը քանդված են։

ՇԱՆԳՀԱՑ։ Սըր Ռօբերտ Կարտի Պէկինից Տեանձին ուղարկած սուրհանդակը տեղեկութիւն բերեց, որ բացի գերմանականից, նոյնպէս եւ անգլիականից եւ իտալականից, բոլոր մնացած դեսպանութիւնները Պէկինում քանդված են։

ՇԱՆԳՀԱՑ։ Պէկինում ապրող եւրոպացիները յունիսի 18-ին պաշարված են անգլիական դեսպանատան մէջ։

ՇԱՆԳՀԱՑ։ Զինական աղբիւրից ստացված տեղեկութիւնների համեմատ, հէնց Կէտտէլէրի սպանութեան օրը սպանվեցին կրկին երկու դեսպաններ։ Նոյն աղբիւրից հաղորդում են, որ միսիոնէրական հիւանդանոցը Մուկդէնում այրված է, տեղացի-քրիստոնեաները կոտորված։ Օտարահպատակ միսիոնէրները փախան Նիւժուան։

ՊԱՐԻԶ։ Ինչպէս ասում են, անգլիական դեսպանութիւնը տեղեկութիւն ստացաւ ֆրանսիական եւ անգլիական դեսպանների սպանութեան մասին, բայց հրաժարվում են հաստատել այդ լուրը։

ՇԱՆԳՀԱՑ։ Պատերազմը վերսկսվեց Տեանձինի չուրջը։ Սէյմուր վիրաւորված է։

ԶԻՖՈՒ, 20 յունիսի։ Հաղորդում են, որ բոլոր օտարահպատակներին հրաժայված է հեռանալ Տեանձինից։ Դրութիւնը սպառնալի է։ Քաղաքային պատերի տակ չինացիները խրամատներ փորեցին եւ տիրեցին երկաթուղուն Տեանձինի եւ Լուտայի միջեւ։ Միսիոնէրները Խիննիգից ճանապարհվեցան Ցզինգտաու։—Զիֆուի գերմանական հիւպատոսը յունիսի 20-ից հաղորդում է, որպէս թէ Պէկինում գեներալ Տունֆուցզիան եւ պրինց Տուան «ոչընդանը. բեմ են դուրս գալիս թիւրք երիտասարդներ զինված սրերով, նիզակներով, վահաններով, մահակներով, եւ սկսվում է մենամարտութիւն։ Պաղ երկաթը չոչղողում է հեւացող, կատաղի մարդկանց ձեռքերում, կրուողների աչքերը փայլում են կայծեր արձակելով սրերի հետ, նրանք ցատկում են իրար վրա արիւնարբու վագրի պէս։ Ապա յայտնվում է մի այլ մեծ խումբ, մի վայրենի ֆանատիկոս խուժան. սուր, հրացան, մահակ խառնվում են իրար, ճռճռում օդի մէջ սպառնալի կերպով, չորս կողմից ճչում են, ոռնում, հայհոյում եւ զրոհ տալիս դէպի դուրս, դէպի մի արիւնոտ գործ։ Պատկերը կատարեալ դարձնելու համար այստեղ պակասում են մի քանի քրիստոնեաներ, լաւ որ հանդիսականները եւրոպացիներ են։

Պատկերը չափազանց զզուելի է, յարուցած յիշողութիւնները չափազանց ծանր, որ ես յանձն առնեմ չարունակել թիւրք կուլտուրայի եւ իր պարկեշտ բարքերի գոհարները նկարագրել։ Կասեմ միայն, որ պավիլիօնը շատ է մեծ, նրան մի կերպ լցված ցոյց տալու համար թիւրքերը դիմել են մի շատ գործնական միջոցի, մի խումբ կանանց փոխարէն երկու խումբ են բերել եւ թէ վերի, թէ ներքեւի յարկերում իրանց հոչակաւոր թատրօնը պատրաստել։

Ահա թիւրքական կուլտուրան,—թող աշխարհը տեսնի եւ աքանչանայ։

Ա. Ահարոնեան

նրան տեսնել։ Այստեղ արդէն բազար է, թիւրքական «մէյդան» իր բոլոր գրաւիչ կողմերով։ Ստամբօլի հոտած քարվանսարաներում ոռնացող մի հայկական բազմութիւն իր գորգերը, եաղմաները, «չարղաթները», խասերը, յուլունքները, ինչ որ ամաններ, թասեր տեղափոխել է այստեղ. չորս կողմում կանչվռտոց, անպատկառ հրաւէր, «մադամ ջան, այ մադամ» ճչում են այս լպիրշ թիւրքերը անցնող տիկիններին իրանց ապրանքները ցոյց տալով, գովելով. մի եւ նոյն պատկերն է թէ ստորին եւ թէ վերին յարկում։

Թիւրքիան երեւի անկատար կը լինէր, եթէ հարեմի եւ արիւնի պատկերը նոյնպէս չը ներկայանար Եւրոպային. թիւրքը խելացի է, հոգացել է, որ իրան լաւ ճանաչեն։ Գլխաւոր մուտքից դէպի ձախ վարագոյրով ծածկված մի դրան ետեւից լսվում են ինչ որ վայրենի աղաղակներ, ոտների տոփիւն, ասիական նուագարանների պզպզոց, դափի ձայն. դրան վերեւում գրված է «Théatre turque»։ Ընթերցող, չեմ զարմանում, Պարիզում թիւրքական թատրօն։ Ներս ես մտնում, սա մի թիւրքական կաֆէ է։ Դահլիճի խորքում, փոքրիկ բարձրութեան վրա, որ բեմի տեղն է ծառայում, հանդէս են գալիս մի խումբ թիւրք եւ սուրիացի լրբացած կնիկներ՝ կիսամերկ, մատ ու կրքոտ, սկսում են մի վայրենի, մի անպատկառ պարփորի պար—մինչդեռ չորս կողմում դարձեալ բեմի վրա ծալապատիկ շարված թիւրքերը ծափ են տալիս, մատերով չրխկացնում, զանազան ձայներ հանում։ Շատ ենք լսել հարեմներում կատարվող օրգիաների մասին, բայց իրապէս հասկանալու համար տեսնել է պէտք. չնութեան արուեստի բոլոր նրբութիւնները կինը ներկայացնում է բորբոքիտ թիւրքի առաջ։ Անկարելի է առանց խորին զզուանքի տեսնել, թէ ինչպէս թիւրք կինը իր մարմնի այս կամ այն մասը ցնցում, շարժում է անառակութեան, ցոփութեան շարժումներով եւ. ինչպէս են նայում այդ ծափահարող թիւրքերը բերանները ծռմռված վաւաշոտ ժպիտով։ Ահա թիւրքական թատրօնը։ Երբէք, երբէք կինն աւելի ստորացած, աւելի անարգված չէ կարող լինել, քան նա է թիւրքի ձեռքում։ Նա մարդ չէ այստեղ, այլ մի իր, զուարճութեան մի կենդանի առարկայ, շարժուն կենդանի միս, ուրիշ ոչինչ։ Ո՛չ, ինչ ուզում են թող ասեն, բայց եւրոպացի ընկած կնոջ մէջ անգամ մարդն այդ աստիճան չէ ստորանում, արժանապատուութեան մի նշոյլ անշուշտ մնում է։ Եւ այս պատկերը տեսնելուց յետոյ մարդ ակամայից հարց է տալիս իրան, թէ արդեօք թիւրքական հարեմն աւելի առաջ չէ՞ գնացել, քան որ եւ է հասարակաց տուն, եւ թէ այնտեղ փակված կինը, հակառակ իր կամքի, կամաց-կամաց, աւելի ընկած, աւելի լպիրշ չէ՞ դառնում, քան նոյն իսկ եւրոպական մեծ քաղաքների խաւար անկիւններում անցորդ փնտռող մի թշուառ կին, որին միայն կարիքն է դուրս շպրտում։

Կանանց այս խայտառակ պարին յաջորդում է թիւրքական ներկայացման երկրորդ տեսարանը. բեմ են դուրս գալիս թիւրք երիտասարդներ զինված սրերով, նիզակներով, վահաններով, մահակներով, եւ սկսվում է մենամարտութիւն։ Պաղ երկաթը չոչղողում է հեւացող, կատաղի մարդկանց ձեռքերում, կրուողների աչքերը փայլում են կայծեր արձակելով սրերի հետ, նրանք ցատկում են իրար վրա արիւնարբու վագրի պէս։ Ապա յայտնվում է մի այլ մեծ խումբ, մի վայրենի ֆանատիկոս խուժան. սուր, հրացան, մահակ խառնվում են իրար, ճռճռում օդի մէջ սպառնալի կերպով, չորս կողմից ճչում են, ոռնում, հայհոյում եւ զրոհ տալիս դէպի դուրս, դէպի մի արիւնոտ գործ։ Պատկերը կատարեալ դարձնելու համար այստեղ պակասում են մի քանի քրիստոնեաներ, լաւ որ հանդիսականները եւրոպացիներ են։

Պատկերը չափազանց զզուելի է, յարուցած յիշողութիւնները չափազանց ծանր, որ ես յանձն առնեմ չարունակել թիւրք կուլտուրայի եւ իր պարկեշտ բարքերի գոհարները նկարագրել։ Կասեմ միայն, որ պավիլիօնը շատ է մեծ, նրան մի կերպ լցված ցոյց տալու համար թիւրքերը դիմել են մի շատ գործնական միջոցի, մի խումբ կանանց փոխարէն երկու խումբ են բերել եւ թէ վերի, թէ ներքեւի յարկերում իրանց հոչակաւոր թատրօնը պատրաստել։

Ահա թիւրքական կուլտուրան,—թող աշխարհը տեսնի եւ աքանչանայ։

Ա. Ահարոնեան

չացում օտարերկրացիների» նշանաբանի տակ յափշտակեցին իշխանութիւնը եւ բացարձակ կուսում են կայսրուհու եւ պրինց Զժինի հետ։ —Շանդունի նահանգապետը 2000 մարդկանցով կանգնած է Ցզինանում, ըստ երեւոյթին այն մտքով, որ դիմադրէ գերմանական արշաւանքին Ցզինտաուի կողմից։ Նրա սեփական բանակի 3000 մարդ եւ 10,000 գաւառական զինուորներ գտնվում են Զժիլիի սահմանի վրա։ Նահանգապետը առ այժմ սպասողական դիրք է բռնել եւ հարաւային ու միջին Զինաստանի ընդհանուր նահանգապետների հետ ամենասերտ միութեան մէջ է։

ՇԱՆԳՀԱԻ։ Եալչիկայի ուղարկեց Պէկինի ռուսաց հիւպատոսին հաւատացում, թէ կաջակցէ Խինի փոխարքային, որին պէտք է ուղարկել մեծ զինուորական ոյժ Նանկին՝ օտարերկրացիներին թշնամի մանդարիններին սանձահարելու եւ խռովութիւնն ու անիշխանութիւնը վերացնելու համար։

Այն օրը, երբ սպանվեց գերմանական դեսպանը, ցզունգ-լի-եամէն էին հրաւիրված բոլոր դեսպանները։ Անգլիական, ֆրանսիական եւ ամերիկական դեսպանները, կասկածելով թէ դաւաճանութիւն կայ, հրաժարվեցան դուրս գալ դեսպանատներից, իսկ կետտելէր ընդունեց հրաւէրը եւ դուրս եկաւ դեսպանատնից գերմանական ծովային զինուորների մի փոքրիկ թիկնապահ խմբի հետ։ Երբ նա մօտեցաւ ցզունգ-լի-եամենին, նրա վրա յարձակվեց չինական զինուորների մի ահագին խումբ, եւ նա ստացաւ չորս վէրք։ Գերմանական ծովային զինուորները հրդեհեցին ցզունգ-լի-եամէնը։ Կետտելերի մարմինը սարսափելի կերպով այլանդակել են։ Ամբոխը յարձակվեց դեսպանատների վրա, որոնցից շուտով ողջ մնացին միայն անգլիականը, գերմանականը եւ իտալականը։ Անգլիական դեսպանատան դէմ սաստիկ հրացանաձգութիւն սկսվեց։ Անգլիական պահապան զօրքը մեծ կորուստներ ունեցաւ։

22 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը հրամայեց՝ Բալտեան գործարանում կառուցվող № 7 նաւատորմային զրահապատ նաւը անուանել «Իշխան Սուվորով»։

Փոխ-ծովապետ Ալէքսէեվի հեռագիրը Պորտ-Արտուրից, յունիսի 18-ից. 1) Յունիսի 17-ին Պէկինից Տակու է հասցրված հետեւեալ հաւաստի տեղեկութիւնը յունիսի 10-ից. «Զինական զինուորները սպանեցին գերմանական դեսպանին ցզունգ-լի-եամէն գնալիս. նա մեռաւ եամէնում։ Ռուսաց դեսպանատունը կիսով չափ աւերված է. բոլոր դեսպանատները այրված են, բացի անգլիական, ֆրանսիական եւ գերմանական դեսպանատներից, ուր հաւաքվեցին բոլոր եւրոպացիները եւ դէսպանները. նրանք շրջապատված են բռունցքականներով։ Սկսվում է ուտելեղէնի պակասութիւն զգացվել. դրութիւնը կրիտիքական է. անհրաժեշտ է օգնութիւն։ Պէկինում կենտրոնացած է մինչեւ 30,000 զօրք։ 2) Տակուից, յունիսի 17-ից գեներալ Ստէսել զեկուցեց, որ գերմանական դեսանտը, թէ օֆիցէրները եւ թէ զինուորները. միասին կուելու ժամանակ, կատարելապէս ենթարկվեցին մեր հրամանատարութեանը, ամեն գովասանքից բարձր էին պահում իրանց եւ ցոյց տուեցին աչքի ընկնող քաջութիւն, գործի կատարեալ հմտութիւն եւ կարգապահութիւն»։

ՇԱՆԳՀԱԻ։ Իր համաձայնութիւնը եւրոպացիների հետ ընդգծելու համար, Նանկինի փոխարքան դադարեցրեց թնդանօթների հայթայթումը Եանցզէգէի երկարութեամբ գտնվող մարդկոցներին եւ առհասարակ բոլոր պատերազմական զինաւորումները, որոնք ուղղած են օտարազգիների դէմ։ Լուրերին նայելով, փոխարքան հրաժարվեց զօրք տալ Լիպէնգինին՝ հիւսիսում գործելու համար։ Լիպէնգին դուրս եկաւ Նանկինից ընդամենը 300 զինուորով. նա գնում է Մեծ Ջրանցքի երկարութեամբ, բայց չեն կարծում, որ նա կարողանայ առաջ գնալ։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Գէյ հաղորդեց հեռագրով ամերիկական դեսպաններին Եւրոպայում եւ Եապոնիայում յայտնելու կառավարութիւններին հետեւեալը. Միացեալ-Նահանգների կառավարութիւնը չէ ընդունում պատերազմական դրութեան գոյութիւն եւ նաւեր է ուղարկել ոչ թէ Զինաստանի դէմ պատերազմ վարելու համար, այլ ամերիկական քաղաքացիներին ու նրանց շահերը պաշտպանելու եւ կարգը վերականգնելու համար։ Նրանք կը հեռանան Զինաստանից կարգը վերականգնելուց յետոյ։

ՊԱՐԻԶ։ Պատասխանելով ժամանի պաշտօնից հեռանալու մասին եղած հարցին, Անդրէ պատգամաւորների ժողովում պատասխանում է դրական՝ եւ աւելացնում է թէ ժամանը պարտք համարեց հեռանալ պաշտօնից գլխաւոր շտաբի բիւրօի մէջ եղած փոփոխութիւնների պատճառով, ասելով թէ «գլխաւոր շտաբի մէջ տիրող երերուն դրութիւնը անհնարին է դարձնում զօրքի կառավարութիւնը պատերազմի դէպքում»։ Ժամանի այս ոճով կազմած նամակը մի բողոք էր կառավարութեան գործողութիւնների եղանակի դէմ, եւ ժամանը արձակված է պաշտօնից, մնալով զօրքի պահեստի մէջ, իսկ նրա տեղը նշանակված է Բրիժէր։ Կրանց առաջարկում է հարցը հարցապնդում դարձնել։ Վալդեկ ընդունում է անյապաղ քննութիւնը։ Կրանց յարգանք է յայտնում ժամանին եւ յանդիմանում է կառավարութիւնը այն պատճառով, որ նա խանգարում էր գլխաւոր շտաբի ծառայութիւնը։ Ժուրդ ասում է, թէ ինքը չէ հասկանում, ինչպէս է որ Կրանցը, նախկին զինուորական մինիստր, կարողանում է գովաբանել գիսցիպլինայի խանգարումը։ Մի ուրիշ պատգամաւոր յանդիմանում է Կրանցին, թէ նա բրիւժերի 18-ի պետական յեղափոխութեան կողմնակից է։ Ապա առաջարկվեցան հերթական հարցերին անցնելու երկու բանաձեւ. առաջինը հաւանութիւն է տալիս կառավարութեան յայտարարութեան, իսկ երկրորդը, Կրանցինը, ցաւ է յայտնում այն քաղաքականութեան առիթով, որ զօրքի կազմալուծութեան է բերում։ Վալդեկ համաձայնութիւն է տալիս առաջին բանաձեւին, որը եւ ընդունվեց։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը Պետերբուրգի հաշով)

տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։			№ 3 գնացքը։		
Բաղուից դուրս է գալիս	ցեր.	4 ժ. 1 ր.	գիշ.	11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում	առ.	8 » 53 »	եր.	5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս	»	9 » 32 »	եր.	6 » 34 »
Բաթում է հասնում	եր.	9 » 1 »	առ.	7 » 14 »

№ 6 գնացքը։			№ 4 գնացքը։		
Բաթումից դուրս է գալիս	առ.	7 ժ. 50 ր.	եր.	7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում	եր.	7 » 15 »	առ.	8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս	»	7 » 18 »	»	10 » 05 »
Բաղու է հասնում	ցեր.	12 » 10 «	»	5 » 16 »

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր.	11 ժ.	19 ր.
Բաթում է հասնում	երեկ.	9 »	41 »
Բաթումից դուրս է գալիս	գիշ.	11 »	18 »
Թիֆլիս է հասնում	առաւ.	9 »	30 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս	երեկ.	9 ժ.	—
Ալէքսանդրոպոլ հասնում է	առ.	7 »	46 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 »	56 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	3 »	29 »
Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս	երեկ.	8 »	35 »
Թիֆլիս հասնում է	առ.	7 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. Թաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Կ. Ի. Գզէլիեվ—12½—1½ ժ. ականջի, կոկորդի և քթի հ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Վ. Դ. Ծէրեթելի—6—8 ժ. ներքին և երեխայոց հ
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Մանգլիսում մի օտարուհի, որ գիտէ հիմնաւոր կերպով ֆրանսերէն եւ գերմաներէն, ցանկանում է դասեր տալ։ Պայմանների մասին տեղեկանալ Մարչենկոի ամարանոցում։ 1—3

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ

ԲԺ. ՎԱՀ. ԱՐԾՐՈՒՆԻՆ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

մասնագիտաբար

ԲԳԻ, ԿՈԿՈՐԴԻ, ՔԹԻ ԵՒ ԱԿԱՆՋԻ

հիւանդները ընդունվում են առաւ. ժամը 8—12.

Հասցէն՝ Нижній бульваръ, д. Фидлера. (рядомъ армянск. церкви.) 10—10

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետեւեալ գրքերը՝

Աւետիքեանց Ս., Իրլանդիայի դատը, Բագու, գինն է 80 կ.։
» Նահատակը, Թիֆլիս, գ. 20 կ.։
» Սամիտարնի, Թիֆլիս, գ. 20 կ.։
» Ղեկավարներ, 1) Կապ բռնողը, 2) Մեր տէրը, Թիֆլիս, գ. 40 կ.։
Բարխուդարեանց Մ., Հանդէս գրակ. եւ պատմական VII գիրք, որի կէսը Միք. Նալբանդեանի ընդարձակ կենսագրութիւնն է կազմում, Մոսկ., գ. 2 ր.։
Երեսուն եւ հինգ տարի (1862—1897), Մոսկ. գ. 30 կ.։
Շանթ, Երազ օրեր, Թիֆլիս, գ. 40 կ.։
» Դարձ, Թիֆլիս, գ. 40 կ.։
» Վիրժին, Թիֆլիս, գ. 60 կ.։
» Դերասանուհին, Թիֆլիս, գ. 40 կ.։

Դիմել՝ Въ Тифлисѣ, Центральной Книжной Торговлѣ. (5) 2—2

ЖЖЕНІЕ СПОСОБОМЪ ЛЕТЮРКЪ ДЕ РОЗЬЕ 20% БОЛЬШЕ АРОМАТИЧЕСК. ЧАСТЕЙ
ЖЖЕНЫЙ КОФЕ
ПРОДАЖА ВЕЗДѢ С. СІУ и К°
1—26 (п)

ՊԱՏԱՀՄԱՄԲ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ

Բաթումում, քաղաքի կենտրոնում, երկու հիմնաւոր շինած քարեայ, լաւ արդիւնք բերող տներ, որոնք շինված են մի տարի առաջ։ Մէկը գտնվում է երկու ամենալաւ փողոցների՝ Միխայլովսկի եւ Օկլոբժինսկիի անկիւնում, «Լօնդօն» հիւրանոցի կողքին։ Տունը եռայարկ է, ունի իր մէջ 21 սենեակ եւ այլ կարեւոր շինութիւններ ու 5 մագազին. յարմար է հիւրանոցի, գրասենեակի եւ բնակարանի համար։ Միւս տունը գտնվում է Օկլոբժինսկայա փողոցում, Սաբաեվի մեբելի վաճառանոցի հանդէպ, եւ բաղկացած է 26 սենեակից, իրանց կարեւոր շինութիւններով եւ 8 նկուղներով։ Ծախվում է նոյնպէս հիմնաւոր շինած, քարեայ, չոր ամարանոց, բաղկացած 24 սենեակից, որոնք յարմարաւորապէս բաժանված են մի քանի բնակարանների, կարեւոր շինութիւններով եւ քարեայ մեծ սարայով։ Ամարանոցը գտնվում է Մախինջաուրի ամարանոցատեղում, ունի գեղեցիկ տեսարաններ եւ հեռու է Բաթումից ընդամենը ¼ ժամվայ ճանապարհ երկաթուղով, գետի մօտ։ Ծովի ափին, բարձրադիր տեղի վրա, որտեղ բուսանում են կիտրոնի, նարնջի եւ այլ տրոպիքական բոյսեր։ Այս երեք կալուածքներն եւս, որոնք տարեկան 8000 բուբլի զուտ արդիւնք են բերում, ծախվում են, տիրոջ Բաթումից հեռանալու պատճառով, ինքնուն եւ երկու հազար բուբլով գնողի համար շատ ձեռնտու պայմաններով։ Գնողը պէտք է վճարէ միայն արժէքի երրորդ մասը, իսկ երկու երրորդի վճարումը կարող է յետաձգվել երկար ժամանակով բանկերում ընդունված պայմաններով կամ բանկում գրաւ դնելու պայմանով։ Իւրաքանչիւր կալուածքը կարելի է ծախել եւ առանձին։ Մի եւ նոյն ժամանակ, որովհետեւ ամարանոցը մօտ է ծովին, հեշտութեամբ եւ էժան գնով կարելի է սարքել այնտեղ ծովային տաքացրած վաննաներ։ Պայմանների մանրամասնութիւններն իմանալու համար դիմել Բաթում, տների եւ կալուածքների տէր Եդ. Նիկ. Սկակովսկուն. Батумъ. Эд. Ник. Скоковскому. 4—5

Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆՑԻ

աւտո էլէվատորը գիշեր-ցերեկ ԻՆՔՆ ԻՐԱՆ ջուր է բարձրացնում ցածր տեղերից վերեւ։
Դիմել՝ Л. Ханъ-Агову, Тифлисъ, Великокняжеская ул., 37.

Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆՑԻ

Գիւղատնտեսական մեքենաներ 250 նկարով. վաճառականների մօտ 50 կոպէկ։ 24—30

Գետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուները, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ դները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բաղում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պաստով։ 84—100

Լոյս տեսաւ Մոսկվայում

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

◆ՀԻՆ ՑԱՒ◆

(Հրապարակախօսական խոհեր)

ԳԻՆԸ 30 Կ.

Վաճառվում է Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում եւ «Մշակի» խմբագրատանը Հրատարակչական ընկերութեան գրասենեակում, Գ. Գալստեանի մօտ։ 5—5

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿ

«ՄԻՋՆՈՐԴ»

(Посредникъ)

Դ. Ի. ԵԱԿԻՄՈՎԻՉԻ

Պուշկինեան պատաժ, Թամամշեվի քարավանսարայի հանդէպ։

Ծախվում են տներ, հողաբաժիններ՝ գործարաններ շինելու համար, քաղաքում եւ քաղաքից դուրս՝ գաւառներում։ Ամարանոցներ, նաբաթին հողեր։ Մանրամասնութիւնների համար դիմել գրասենեակ։ № 2. 0—35

Լոյս տեսաւ

ՑԱՐՈՒԹԻՆ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

ՄԷԼԻՔ-ԻԻՍՈՒՓ

պատմական պօէման

Գինն է 20 կ.

Գումարով գնողներին 20%

Դիմել՝ Тифлисъ, Центральная книжная торговля, կամ Кавказская книжн. торговля, կամ հեղինակին՝ Черезъ Ордубатъ, въ сел. Нижніе-Акулисы. 3—3

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Іюня 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.